Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-952-21.07.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 170.7 հոդվածում՝

1. 1-ին մասը «աշխատավարձի» բառից հետո լրացնել « քսանապատիկի» բառով.

2. 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3. 3-րդ մասի՝

1) «երկու հարյուր» բառերը փոխարինել «հիսուն» բառով,

2) «հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի» բառերը փոխարինել «վեցհարյուրապատիկի» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 170.8 հոդվածի՝

1. «երկու հարյուր» բառերը փոխարինել «հիսուն» բառով.

2. «հարյուրապատիկից մինչև» բառերը հանել:

Հոդված 3. Օրենսգրքի 170.9 հոդվածի՝

1. «երկու հարյուր» բառերը փոխարինել «հիսուն» բառով.

2. «հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի» բառերը փոխարինել «հինգհարյուրապատիկի» բառով:

Հոդված 4. Օրենսգրքի 170.12 հոդվածում՝

1. 1-ին մասի՝

1) «հարյուր» բառը փոխարինել «հիսուն» բառով.

2) «100-ապատիկից մինչև 300-ապատիկի» բառերը փոխարինել «վեցհարյուրապատիկի» բառով.

2. 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 1-ից:

ԱՓՈՓԱԹԵՐԹ

<<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԱԺ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկության, առարկության հեղինակը (առաջարկության, առարկության ստացման ամսաթիվը)	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	Համապատասխանեցնել ուժի մեջ մտնելու ժամկետը:	Ընդունվել է: Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը նախատեսվել է 2011 թվականի ապրիլի 1-ը, քանի որ 2010 թվականի ՀՕ-148-Ն օրենքը, որը կարգավորում է միևնույն հարաբերությունները, ուժի մեջ է մտնում 2011 թվականի մարտի 1-ից, ինչի հետ կապված՝ նախագծով նախատեսված փոփոխությունները և լրացումները կշարադրվեն նախկին խմբագրությամբ